

« 13 » սեպտեմբեր 2022թ. No 4282 - Լ

ՄՆՆԴԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՊՐՈՖԻԼԱՎՈՐՈՒՄԸ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 1902-Լ որոշման հավելված 1-ի «Առողջապահության նախարարություն» բաժնի 5.9-րդ կետը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշման հավելվածով հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել սննդային նյութերի պրոֆիլավորումը՝ համաձայն հավելվածի:
2. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ.Բաբախանյանին՝
ապահովել սույն հրամանի տեղադրումն Առողջապահության
նախարարության պաշտոնական կայքում:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

Ա.ԶՈՒՄԱՅԱՆ

ՍՆՆԴԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՊՐՈՖԻԼԱՎՈՐՈՒՄ

1.ՍՆՆԴԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՊՐՈՖԻԼՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ

1. Սննդային նյութերի պրոֆիլների որոշումը - հիվանդությունների կանխարգելման և առողջության խթանման նպատակով սննդային նյութերի բաղադրությանը համապատասխան սննդամթերքի դասակարգման գիտություն է: Սննդային նյութերի պրոֆիլավորումը ընդունվում է Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից, որպես օժանդակ մեխանիզմ լայն կիրառման նպատակով և հանդիսանում է կարևորագույն գործիք երեխաներին ուղղված սննդամթերքի մարքեթինգի սահմանափակման համար: Սննդային նյութերի պրոֆիլների որոշումը թույլ է տալիս տարբերակել սննդամթերքները և ոչ ալկոհոլային ըմպելիքները, որպես առողջ կամ անառողջ սննդակարգի բաղադրիչ: Սննդային նյութերի պրոֆիլները որոշվում են համաձայն սննդային նյութերի պրոֆիլների մոդելի՝ համաձայն աղյուսակի:

2.ՍՆՆԴԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՊՐՈՖԻԼՆԵՐԻ ՄՈԴԵԼԸ

2. Սննդային նյութերի պրոֆիլների մոդելը օգտագործվում է երեխաներին ուղղված սննդամթերքի մարքեթինգը սահմանափակելու նպատակով: Որոշելու համար, արդյոք տվյալ սննդամթերքի մարքեթինգը թույլատրելի է երեխաների համար, անհրաժեշտ է.

1) Որոշել, թե որ կատեգորիային է պատկանում սննդամթերքը: Որոշ դեպքերում դա ակնհայտ է, ելնելով կատեգորիայի անվանումից (օրինակ՝ հացահատիկային չոր նախաճաշեր, յոգուրտ): Մյուս դեպքերում հարկ կլինի ստուգել «Տվյալ կատեգորիայում ներառված արտադրանք» և «Տվյալ կատեգորիայում չներառված արտադրանք» սյունակները և /կամ ապրանքների մաքսային ծածկագիրը:

2) Ապրանքը որոշակի կատեգորիային դասելուց հետո դրա սննդային արժեքը պետք է գնահատվի համաձայն տրված շեմային արժեքների: Որպեսզի թույլատրելի լինի տվյալ արտադրանքի մարքեթինգը, դրա մեջ պարունակվող համապատասխան նյութերի արժեքները չպետք է գերազանցեն տվյալ

կատեգորիայի ապրանքների համար 100 գ/մլ-ի համար սահմանված շեմային արժեքները: Օրինակ՝ «Հացահատիկային չոր նախաճաշեր» կատեգորիայի մեջ ներառված արտադրանքում ճարպերի, շաքարների կամ աղի քանակները չպետք է գերազանցեն աղյուսակում նշված շեմային արժեքները:

3) Սննդամթերքները, հնարավորության դեպքում, պետք է գնահատվեն այն տեսքով, որով դրված են վաճառքի, կամ (անհրաժեշտության դեպքում) դրանց վերականգնված տեսքով՝ համաձայն արտադրողի հրահանգների:

4) Եթե նախատեսվում է երկու կամ ավելի կատեգորիաներից բաղկացած ռեստորանային, այդ թվում արագ սպասարկման սննդի օբյեկտների և առաքվող ճաշատեսակների մարքեթինգը, ապա սննդային նյութերի շեմային արժեքների համապատասխանությունը պետք է ստուգվի ըստ ճաշատեսակի յուրաքանչյուր բաղադրիչի:

3. ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐՈՒՅԹՆԵՐ

3. Օգտագործվող հիմնական եզրույթներն են.

1) Ընդհանուր ճարպեր. եզրույթը վերաբերում է սննդամթերքի մեջ ընդհանուր ճարպի պարունակությանը և ներառում է երեք խմբի ճարպաթթուներ՝ հագեցած ճարպաթթուներ, մոնոչհագեցած ճարպաթթուներ և պոլիչհագեցած ճարպաթթուներ:

2) Ընդհանուր շաքարներ. եզրույթը վերաբերում է սննդամթերքի մեջ ընդհանուր շաքարի պարունակությանը և ներառում է ամբողջական մրգերի և բանջարեղենի մեջ պարունակվող սեփական շաքարները, կաթնային շաքարը (լակտոզ և գալակտոզ), բոլոր լրացուցիչ մոնոսախարիդները և դիսախարիդները, որոնք ավելացվել են արտադրողների, խոհարարների կամ սպառողների կողմից, ինչպես նաև շաքարները, որոնք բնական կերպով առկա են մեղրի, օշարակների և մրգահյութերի մեջ:

3) Ավելացված շաքար. Սննդային պրոֆիլի տվյալ մոդելի նպատակների համար օգտագործվում է «ավելացված շաքար» տերմինը, քանի որ այս տերմինը առկա է արտադրանքի կազմի աղյուսակներում: Տվյալ փաստաթղթում այս տերմինը վերաբերում է արտադրողների, խոհարարների կամ սպառողների կողմից սննդամթերքին և ըմպելիքներին ավելացվող բոլոր մոնոսախարիդներին և դիսախարիդներին, արտադրանքի պատրաստման կամ վերամշակման ընթացքում: Շաքարի օգտագործմանն առնչվող ԱՀԿ-ի ուղեցույցներում օգտագործվում է «ազատ շաքարներ» տերմինը, որը ներառում է արտադրողների, խոհարարների կամ սպառողների կողմից ավելացված մոնոսախարիդներ (օրինակ՝ գլյուկոզ և ֆրուկտոզ) և դիսախարիդներ (ինչպիսիք են սախարոզը և

սեղանի շաքարը) ի լրումն շաքարների, որոնք բնականից առկա են մեղրում, օշարակներում, մրգահյութերում և մրգերի խտանյութերում: Այս դեպքում, բնական շաքարները, որոնք առկա են, օրինակ, մրգերի ու բանջարեղենի մեջ, չեն համարվում ազատ շաքարներ:

4) Շաքար չպարունակող քաղցրացուցիչներ. դա սննդային հավելումներ են (բացառությամբ մոնո- կամ դիսախարիդների), որոնք քաղցր համ են հաղորդում սննդին: Տեխնոլոգիական տեսանկյունից այս ֆունկցիոնալ դասը ներառում է քաղցրացուցիչներ, ինտենսիվ քաղցրացուցիչներ և զանգվածային քաղցրացուցիչներ: Հարկ է նշել, որ այնպիսի ապրանքներ, ինչպիսիք են շաքարավազը, մեղրը և սննդի այլ բաղադրիչները, որոնք կարող են օգտագործվել քաղցրացնելու համար, կապված չեն «քաղցրացուցիչ» եզրույթի հետ:

5) Էներգետիկ արժեք. դա սննդի և դրա մակրոտարրերի մեջ (ածխաջրեր, ճարպեր, սպիտակուցներ) առկա ընդհանուր քիմիական էներգիան է:

6) Հազեցած ճարպեր. դա սննդակարգում առկա հազեցած ճարպաթթուների հիմնական տեսակներն են՝ մասնավորապես C14, C16 և C18, բացառությամբ կաթի և կոկոսի յուղի, որոնց դեպքում հազեցած ճարպաթթուները տատանվում են C4-ից մինչև C18:

7) Արդյունաբերական արտադրված տրանսճարպաթթուներ. դա սննդակարգում առկա հիմնական տրանսճարպաթթուներն են, որոնք, որպես կանոն հանդիսանում են 18:1 տիպի տրանս իզոմերներ (սննդի արդյունաբերության մեջ կիսապինդ ճարպերի արտադրության տեխնոլոգիայի միջոցով բուսական ճարպերի մասնակի հիդրոհեներիզացումից ստացվող), որոնք օգտագործվում են հացամթերքի, տապակած մթերքների, մարգարինների և այլ սննդամթերքի արտադրության մեջ:

8) Աղ - 1 գ նատրիումը համարժեք է մոտավորապես 2,5 գ աղի:

ՄՆՆԴԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՊՐՈՖԻԼՆԵՐԻ ՄՈԴԵԼ

					Մարքեթինգը արգելված է, եթե սննդամթերքի մեջ հետևյալ բաղադրիչների պարունակությունը գերազանցում է սահմանային ցուցանիշները, 100գր ^b հաշվարկով.						
	Սննդամթերքի կատեգորիա	Տվյալ կատեգորիայում ներառված արտադրանք (օրինակներ)	Տվյալ կատեգորիայում չներառված արտադրանք (օրինակներ)	ԱՏԳ ԱԱ ծածկագրեր ^a (դիրքի ծածկագիրը)	Ճարպեր ընդամենը (գ)	Հագեցած ճարպեր (գ)	Շաքարներ ընդամենը (գ)	Ավելացված շաքարներ (գ)	քաղցրացուցիչներ, շաքար չպարունակող (գ)	աղ (գ)	Էներգետիկ արժեք (կկալ)
1.	Շաքարից պատրաստված հրուշակեղեն և շոկոլադ, էներգետիկ բատոնջիկներ, տոպինգներ և դեսերտներ	Շոկոլադե եւ կակաո պարունակող այլ պատրաստի սննդամթերք; սպիտակ շոկոլադ; մրգային դոնդողներ, մարմելադներ, սառնաշաքարային կարամել; կոնֆետներ; մաստակ; կարամել; մատուտակի կամ մատուտակի արմատի լուծամզով կոնֆետներ; մածուկներ եւ զանգվածներ՝ ներառյալ շոկոլադե, մարցիպանե, ընկուզային մածուկ; մյուսլի; պատրաստի սննդամթերք՝ ստացված չքոված հացահատիկային փաթիլներից կամ չքոված հացահատիկային փաթիլների խառնուրդներից	Շոկոլադե համով չոր նախաճաշեր; տորթեր և ; շոկոլադապատ թխվածքաբլիթեր	1704; 1806; 1905- ի որոշակի արտադրանքներ; 1904- ի որոշակի արտադրանքներ 20.06; 20.08-ի որոշակի արտադրանքներ; 21.06-ի որոշակի արտադրանքներ	Չի թույլատրվում						

		բոված հացահատիկային փաթիլներով կամ հացաբույսերի փքված հատիկներով									
2.	Տորթեր, քաղցր թխվածքաբլիթնե ր և խմորեղեն; այլ քաղցր հացաբույկեղեն և չոր խառնուրդներ դրանց պատրաստման համար	Խմորեղեն; կոուասաններ; թխվածքաբլիթներ/ բիսկվիտներ; բիսկվիտային խմորեղեններ; վաֆլի; մրգերով լցոնած կարկանդակներ; կաթնահունց; շոկոլադապատ բիսկվիտներ; խառնուրդներ և կիսաֆաբրիկատներ թխելու համար	Հաց և հացահատիկայ ին մթերք	19.01.20; 19.05.20; 19.05.31; 19.05.32	Չի թույլատրվում						
3.	Համեմված նախուտեստներ	Պուպկորն և եգիպտացորենի հատիկներ; արևածաղկի սերմեր; ընկույզներ և ընկույզների խառնուրդներ; աղի թխվածքաբլիթներ; այլ նախուտեստներ բրինձից, եգիպտացորենից, խմորից կամ կարտոֆիլից		08.01; 08.02; 10.05; 19.04.10, 19.04.20; Հետևյալ խմբերից որոշները. 19.05; 20.05.20; 20.08.11; 20.08.19; 20.08.99				0		0.1 ^c	
4.	Ըմպելիքներ										
	ա) հյութեր	մրգային և բանջարեղենային 100%-անոց հյութեր; խտանյութից վերականգնված հյութեր; սմուզի		20.09	Չի թույլատրվում ^d						
	բ) Կաթնային ըմպելիքներ ^e	Կաթ և քաղցրացված կաթ; նուշով, սոյայով,	Սերուցք	որոշները 04.01; որոշները 04.02; 22.02.90	2,5			0	0		

		բրինձով և վարսակով համեմված կաթ									
	գ) Էներգետիկ ըմպելիքներ			որոշները 22.02	Չի թույլատրվում						
	դ) Այլ ըմպելիքներ	Կոլա, լիմոնադ, օրանդժադ; այլ ոչ ալկոհոլային ըմպելիքներ, հանքային և/կամ համաբուրավետիչ ջուր, այդ թվում գազավորված շաքարի կամ քաղցրացուցիչների ավելացմամբ	100%-անոց մրգային կամ բանջարեղենային հյութեր; կաթնային ըմպելիքներ	22.01; որոշները 22.02			0	0			
5.	Քաղցր սառեցված մթերք	Պաղպաղակ, սառեցված յոգուրտներ, մրգային պաղպաղակ, սորբետներ		21.05	Չի թույլատրվում						
6.	Հացահատիկային պատրաստի նախաճաշեր	Վարսակի փաթիլներ; եգիպտացորենի փաթիլներ; շոկոլադի համով պատրաստի նախաճաշեր; մյուսլի		19.04.10; 19.04.20	10		15			1.6	
7.	Յոգուրտներ և այլ նմանատիպ սննդամթերք	Յոգուրտ; կեֆիր; քաղցրացված կաթնաթթվային մթերքներ և ըմպելի յոգուրտ; կաթնաշոռային զանգված; կաթնաշոռային պանրիկներ և այլ յոգուրտի փոխարինիչներ; լրացուցիչ բաղադրամաս պարունակող յոգուրտային մթերքներ (միրգ, մյուսլի); սերուցք	Կաթ և քաղցրացված կաթ; նուշի, բրինձի և վարսակի կաթ	Որոշները 04.02; 04.03; 04.04; որոշները 04.06.10; 19.01.10; 19.01.90; որոշները 21.06	2.5	2.0	10			0.2 °	
8.	Պանիր	Պինդ և կիսապինդ պանիրներ; փափուկ պանիրներ; թարմ		04.06	20					1.3	

		պանիրներ (օրինակ՝ րիկոտտա, մոցարելլա); կաթնաշոռ; մշակված պանրային սփրեղեր									
9.	Պատրաստի մթերքներ և արագ պատրաստման համար կիսաֆաբրիկա տներ և սննդային խարնուրդներ	Պիցցա; լազանյա; մակարոնային արտադրատեսակներ սոուսով; կարկանդակներ; պատրաստի մթերքներ; պատրաստի բուլեթերոդներ; մակարոնային արտադրատեսակներ միջուկով; ապուրներ և ժարկոե (փաթեթված կամ պահածոյացված); խառնուրդներ և խմոր		Որոշները 16; որոշները 19.01.20; 19.02.19; 19.02.20; որոշները 19.05; որոշները 20.05; 21.04	10	4	10			1	225
10.	Կարագ և այլ ճարպեր և յուղեր	Կարագ, բուսական յուղեր, մարգարին և սփրեղեր		04.05; 15		20				1.3	
11.	Հաց, հացամթերք և խրթխրթան հացիկներ ⁸	Սովորական հաց (հացահատկային ալյուր, խմորիչ և աղ պարունակող); հաց առանց գլուտենի; հաց առանց խմորիչի; խրթխրթան հացիկներ; չորահաց (սովխարի) և տոստերի հաց	Քաղցր թխվածքաբլիթե ր; թխվածքներ; տորթեր	19.05.10; 19.05.40;19.05.90	10		10			1.2	
12.	Թարմ պատրաստված կամ չոր մակարոնային արտադրատես ակներ, բրինձ և հացահատիկնե ր		մակարոնային արտադրատես ակներ միջուկով կամ սոուսով	10; որոշները 11; 19.02, բացառությամբ՝ 19.02.20	10		10			1.2	
13.	Թարմ և սառեցված միս, թոչնամիս, ձուկ և այլ.	Ձու		02 բացառությամբ՝ 02.10; որոշները 03 բացառությամբ՝ 03.05	Թույլատրվում է						

14.	Մշակված միս, թռչնամիս, ձուկ և այլ.	Երշիկ, խոզապուխտ, բեկոն; հավի նագետսներ; ապխտած և մարինացված ձուկ; յոտի կամ սեփական հյուսի մեջ պահածոյացված ձուկ; ձկան ձողիկներ կամ ձկան կտորներ չորահացի մեջ сыра/кляре	Պեպպերոնի պիցցա	02.10; որոշները 03; որոշները 16	20					1.7	
15.	Թարմ և սառեցված մրգեր, բանջարեղեններ և լոբազգի բանջարեղեն	Մրգեր, բանջարեղեններ և լոբազգի բանջարեղեն; օսլա պարունակող բանջարեղեն, արմատներ և պալարներ	Պահածոյացված մրգեր, բանջարեղեններ և լոբազգի բանջարեղեն; մրգեր օշարակի մեջ; չորամրգեր; սառեցված մրգեր շաքարի ավելացմամբ	07 բացառությամբ՝ 07.10, 07.11, 07.12, 07.13; որոշները 08 բացառությամբ՝ 08.01; 08.02; 08.11; 08.12; 08.13; 08.14	Թույլատրվում է						
16.	Մշակված մրգեր, բանջարեղեններ և լոբազգի բանջարեղեն	Պահածոյացված մրգեր, բանջարեղեններ և լոբազգի բանջարեղեն; չորացված բանջարեղեններ և լոբազգի բանջարեղեն; ջեմեր, մարմելադներ, մարինացված բանջարեղեն և մրգեր; եփված մրգեր; ցուկատներ; սառեցված կարտոֆիլ ֆրի; սառեցված մրգեր շաքարի ավելացմամբ	Մրգային հյութ	07.10; 07.11; 07.12; 07.13; որոշները 08.03; որոշները 08.05; որոշները 08.06; 08.11, 08.12, 08.13 և 08.14; 20.01; 20.02; 20.03; 20.04; 20.05; 20.06; 20.07; 20.08.20, 20.08.30, 20.08.40, 20.08.50, 20.08.60, 20.08.70, 20.08.80; 20.08.93; 20.08.97; 20.08.99	5		10	0		1	
17.	Սոուսներ, համեմունքներ և համեմվածքներ	Համեմվածք աղցանի համար; կեռչուպ; մայրնեզ; պատրաստի սոուսներ; սոյայի սոուս; մանանեխ և մանանեխի փոշի		21.03	10			0		1	

a Համապատասխան դեպքերում նշված է դիրքի քառանիշ ծածկագիրը: “Որոշները” նշանակում է, որ սննդամթերքների մեծ մասը, բայց ոչ բոլորը վերաբերում են այս դիրքի ծածկագրին: Որոշ դեպքերում նշվում է վեցանիշ ծածկագիրը, համապատասխան արտադրատեսակը ավելի հեշտ գտնելու նպատակով:

b Հնարավորության դեպքում սննդամթերքը պետք է գնահատվի դրա վաճառքի համար պատրաստի տեսքով, իսկ անհրաժեշտության դեպքում արտադրողի հրահանգներին համապատասխան վերականգնված տեսքով:

c Աղային համարժեքության ցուցանիշ:

d Համաձայն երեխաների և մեծահասակների համար շաքարի օգտագործման ԱՀԿ-ի ուղեցույցի, հաշվի առնելով, որ մրգային հյութերը երեխաների համար հանդիսանում են ազատ շաքարների հիմնական աղբյուրներից մեկը:

e Այս մոդելի մեջ ընդգրկված չեն մանկական կաթնախառնուրդները, քանի որ համաձայն “Գովազդի մասին” ՀՀ օրենքի ”Մանկական և վաղ տարիքի երեխաների կաթնախառնուրդների, մինչև 6 ամսական մանուկների համար մանկական կաթնախառնուրդ չհանդիսացող ցանկացած սննդամթերքի և հարակից ապրանքների գովազդն արգելվում է”: